սպանին զիշխան ոմն, որ էր այր քաջ և հզօր պատերազմող. և ելին անվնաս և գնացին զիւրեանց տեղիս։

1589. Հայոց թվ. ՌԼԸ. Օգոստոսի. Եկաւ ան տաճիկ ազգն, և Անեադին քաղաքս հրկիզ արաւ, և բազում վնաս գործեց, և անթիւ մալ և խաղնա տարաւ. զմարդիկ ի սուր մաչեց և զայլն գերի տարաւ, վասն զի եարմարքի (տօնավաճառ) ժամ էր։ Բայց այս եղեւ ի թուլութենէ և անհոգութենէ իշխանաց մերոց։

1591. Թվ. ՌԼԹ. Օգոստոսի. Ի քաղաքս Կամինից նոր պարոն եկաւ, որ կոչի Եան Բոգոցքիյ. և զմիւս պարոնն որ կոչի Նիքոլայ Պրիսքիյ՝ կենդանի գոլով՝ եհան ի բերդէն, և փոխանակ նորա ինքն նստաւ։

1590. Հայոց թվ. ՌԼԹ. Մեծ երաշտ եղաւ, որ բնաւ անձրեւ չեկաւ մինչեւ ի բուն ամառն. և սերմանիքն և բոյքն չորացան. վասն այն պատճառին մեծ սով և թանկութիւն եղաւ. զի ցորենոյ կապիճ տասն մաճրի (ոսկի) եղաւ, և սուլուն՝ 8 մաճրի, և տուկուն՝ 10 մաճրի, և կորեկն՝ 8 մաճրի, և ուվուսն՝ 4 մաճրի. զոր բնաւ տեսեալ չէր և ոչ լուեալ։ Բայց այս ամենայն եղեւ վասն չարաչար օրինազանցութեանց և դառն մեղաց մերոց. զոր Տէր Աստուած աւարտն ի բարին փոխէ. ամէն։

Հայոց թվ. ՌԼԹ. Օգոստոսի. Երկիր շարժեցաւ, զոր ընդ ամենայն տեղիս ծանուցեալ եղեւ. բայց անվնաս եղաւ նախախնամութեամբն Աստուծոյ։

1591. Հայոց թվ. ՌԽ. յուլիսի Զ. Մեծ հիանալի և զարմանալի մանաւանդ Աստուծոյ զքանչելագործութիւն կատարեցաւ. զի այս սովոյս ժամանակն ի միում աւուր յառաւօտու՝ ինանական սօմ Միխնոյ երեսփոխանն սոլու ծախեց, և մինչեւ ի ճաշք չորսական սօմ եղաւ ի նոյն օրն։ Փառք Աստուծոյ մարդասիրին. ամէն։

1591. Հայոց թվ. ՌԽ. Վարդավառին պահոցն երկուշաբթի Ծերշքո էլչի ի թագաւորէն գնաց ի խոնդիքարն։

1591–2. Հայոց թվ. ՌԽ. Թագաւորն Զիկմունդ Երրորդ վասն իրիք խռովութեան՝ զոր էր բարկացեալ ան թուրքի խոնտիքարն ի վերայ այս աշխարհին և կամէր պատերազմել ընդ այս թագաւորիս. զոր և զհաշտելութիւն զոր ունէին ի նախնեաց՝ նա և զերդումն կամէր աւերել. բայց թագաւորն մեր Զիկմունդ հաստատուն եկաց ի վերայ իւրոյ երդմանն, և առաքեաց առ նա պատգամաւորս, զոմն Ծերշքո անուն և Զամոյսքիյ, որ գնացին մեծամեծ պարգեւաք, և հազիւ կարացին զինչուցանել զբարկութիւն այդ... և հաստատեցին զխաղաղութիւն ըստ առաջնոյն, զոր ունէին ի նախնեաց իւրեանց որդից որդիս յաւիտենական։ Բայց ան զգուշացոյց, զի մի՛ գերկիրն իւր խաղախն բնաւ չաւիրէ և ոչ վնաս գործէ. բայց եթէ աւերեսցէ և վնասեսցէ ինչ՝ դարձեալ խաղաղութիւնն ի խռովութիւն փոխեսցի և աւերեսցի։ Այսքան և առ այս։